ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ

2022թ. հունվար- դեկտեմբեր

Ամփոփ նկարագիր

- 2022 թվականի ուշագրավ իրադարձություններից ամենանշանակալին ռուս–ուկրաինական հակամարտությունն է: Համավարակից հետո 2022 թվականը պետք է աշխարհի համար լիներ վերականգնման տարի, սակայն ռուս–ուկրաինական հակամարտությունը խաթարեց վերականգնումը:

- Պատժամիջոցների հետևանքով գրանցվեց ռուսների հոսք դեպի Հայաստան: Հայաստանը դարձավ գրավիչ փոխարինող առևտրային գործընկեր, քանի որ Հայաստանի նկատմամբ պատժամիջոցներ չկիրառվեցին: Որպես հետևանք՝ հայկական ապրանքների նկատմամբ պահանջարկն ավելացավ, ինչի մասին վկայում է Հայաստանի տնտեսական ակտիվության բարձր ցուցանիշը, որը 2022թ. դեկտեմբերին կազմեց 12.9%, իսկ հունվար–դեկտեմբերին՝ 14.2%:

- Հայկական դրամը տարեսկզբից արժևորվել է մոտ 18%-ով:

- 2022թ. հունվար–դեկտեմբերի նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատականը ցույց է տալիս, որ.
  - Արտահանումն աճել է 77.7%–ով:
  - Ներմուծումն աճել է 63.5%–ով:
  - Զբոսաշրջիկների թվաքանակն աճել է 90.2%–ով:
  - Միջին աշխատավարձն աճել է 15.5%–ով:
  - Ծառայությունների ծավալն աճել է 28.2%–ով:
  - Ներքին առևտուրն աճել է 17.0%–ով:

- Հայաստանում 2022թ. հունվար–դեկտեմբերին գնաճը հասել է 8,6 տոկոսի, իսկ Կենտրոնական բանկը 2022 թվականի ընթացքում վեց անգամ բարձրացրել է տոկոսադրույքը:

Հիմնական տնտեսական ցուցանիշներ

Գծապատկեր 1: Տնտեսական ակտիվության ցուցանիշ
2022թ., աճողական



Գծապատկեր 2:
Աճն ըստ ոլորտների
2022թ. դեկտեմբերը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ



Գծապատկեր 3:
Աճն ըստ ոլորտների
2022թ. հունվար-դեկտեմբերը նախորդ տարվա հունվար–դեկտեմբերի համեմատ



- **Տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ)** ամբողջ տարվա ընթացքում ցուցաբերել է աճի միտում՝ 2022թ.-ի ընթացքում գտնվելով 9,4-14,8%-ի միջակայքում: Հունվար-ապրիլից հետո ՏԱՑ–ը երկնիշ է, ընդ որում այն չի դանդաղել մինչև 2022թ.-ի հունվար-նոյեմբերը, որից հետո նկատվեց ակտիվության փոքր դանդաղում:
- **Արդյունաբերություն.** Արդյունաբերական արտադ–րանքի ծավալը 2022 թվականին կազմել է 2683.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 7.9%-ով: 2022 թվականի արդյունաբերական արտադրության աճին նպաստող հիմնական ենթալորտներն են՝ մշակող արդյունաբերությունը (2021թ. համեմատ աճը՝ 13.5%) և էլեկտրաէներգիան, գազը, գոլորշու և բարձրորակ օդի մատակարարումը (2021թ. համեմատ աճը 0.9%): Արդյունաբերության աճի վրա բացասաբար է ազդել հանքագործական ոդյունաբերությունը:
- **Շինարարություն.** Շինարարության ծավալը 2022 թվականին կազմել է 541.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 12.5%-ով: Շինարարության աճին հիմնականում նպաստել է կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության 2021թ. համեմատ 21.3% աճը:
- **Առևտուր.** Ներքին առեւտրի ծավալը 2022 թվականին կազմել է 4370.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 17%-ով: 2022 թվականին աճի հիմնական պատճառներից մեկը Ռուսաստանից Հայաստան ռուսների ներհոսքն է:
- **Ծառայություններ.** Ծառայությունների ծավալը 2022թ. կազմել է 2575.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 28.2%-ով: Ծառայությունների աճին նպաստելլ են՝ ֆինանսական և ապահովագրական գործունեության 49,3%՝ տրանսպորտի 39,1%՝ և տեղեկատվական և կապի 42,0% աճերը: Բարձր աճը կարող է կապված լինել նաև ռուսներ հոսքի հետ, քանի որ նրանցից շատերը մշտապես տեղափոխվել են Հայաստան, բացել բիզնեսներ՝ շուկայում նոր պահանջարկ:

Զբոսաշրջություն

Գծապատկեր 4: Միջազգային զբոսաշրջիկների ժամանումներ



Գծապատկեր 5: Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկների քանակ



- Հայաստանը 2022 թվականին նախորդ տարվա համեմատ զբոսաշրջիկների թվի զգալի աճ է արձանագրել:
- 2022 թվականին զբոսաշրջիկների թիվը հասել է 1665,7 հազարի, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 90,2 տոկոսով:
- Զբոսաշրջիկների թվի աճի պատճառներից են.
  - ռուս-ուկրաինական պատերազմը
  - հայկական սփյուռքի հոսքը:
- Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկներին բաժին է ընկել ամբողջ մուտքերի 47..5%-ը:
- Ելնելով զբոսաշրջիկների թվի աճից՝ ակնկալում ենք, որ ֆինանսական ներհոսքը 2022թ. նույնպես կավելանա մոտ 90%-ով, քանի որ թե՛ զբոսաշրջիկների և թե՛ նրանց կողմից իրականացված ծախսերը համաչափ են Հայաստանի համար:
- Ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկների թիվը հսկայական աճ է գրանցել: Նախորդ համեմատ ՌԴ-ից զբոսաշրջիկների թիվն աճել է 22 անգամ: Աճի հիմնական պատճառներն են:
  - Ռուս-ուկրաինական պատերազմ
  - Պատժամիջոցներ Ռուսաստանի նկատմամբ
  - Հայաստան ռուսների ներհոսք
  - Ռուսաստանում մասնակի մոբիլիզացիայի հայտարարում:

Զբոսաշրջություն



790.4 հազար 10.8 հազար

Ժամանումներ ըստ երկրների

2022

1665.7 հազար, տարեկան աճը՝ 90.2%

Ռուսաստան	790.4 հազար, S/S աճ՝ 2.2 անգամ
Վրաստան	175.0 հազար, S/S աճ՝ 2.5 անգամ
Իրան	116.4 հազար, S/S աճ՝ 27.5%
ԱՄՆ	50.7 հազար, S/S աճ՝ 58.9%
Գերմանիա	23.7 հազար, S/S աճ՝ 97.2%
Ֆրանսիա	23.4 հազար, S/S աճ՝ 62.9%
Հնդկաստան	18.2 հազար, S/S նվազում՝ -0.1%
Ուկրաինա	18.1 հազար, S/S նվազումը՝ -18.3%
Բելառուս	17.2 հազար S/S աճը՝ 2.4 անգամ
Նիդերլանդներ՝	11.0 հազար, S/S աճը՝ 44.0%
Ղազախստան՝	10.8 հազար, S/S աճը՝ 96.9%

Միջազգային առևտուր. արտահանում

Գծապատկեր 6: Ապրանքների արտահանում
2022թ. հունվար-դեկտեմբեր



Գծապատկեր 7: Արտահանումն ըստ ապրանքների
2022թ. հունվար-դեկտեմբեր, մլն ԱՄՆ դոլար



- **Արտահանումը** 2022 թվականին կազմել է 5360,1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելանալով 2343,7 մլն ԱՄՆ դոլարով կամ 77.7%-ով:
- Արտահանման աճի հիմնական նպաստող գործոններից մեկն է ռուս-ուկրաինական պատերազմը, քանի որ Ռուսաստանի դեմ պատժամիջոցները Հայաստանի համար արտահանման համար նոր շուկաներ բացեցին:
- 2022 թվականի աճին նպաստող հիմնական ապրանքներն են՝ (նախորդ տարվա համեմատ)՝
- **Էներգետիկա՝** 87.8 մլն ԱՄՆ դոլար, աճը 46.0 մլն ԱՄՆ դոլարով կամ 2.1 անգամ:
- **Մոլիբդենի հանքաքար և խտանյութ՝** 155.1 մլն Ամնդոլար, ավելանալով 32.8 մլն ԱՄՆ դոլարով կամ 26.8%–ով
- **Կենդանական ծագման արտադրանք՝** 171.4 ԱՄՆ դոլար, ավելանալով՝ 64.4 մլն ԱՄՆ դոլարով կամ 60.2%–ով:
- **Հագուստ՝** 212.2 մլն ԱՄՆ դոլար, ավելանալով 28.7 մլն դոլարով կամ 15.7%.–ով:
- **Բուսական ծագման արտադրանք՝** 225.0 մլն ԱՄՆ դոլար՝ ավելանալով 38.4 մլն ԱՄՆ դոլարով կամ 20.6%–ով:
- **Ավտոմեքենաներ:** 247.2 մլն ԱՄՆ դոլար, ավելանալով 242.2 մլն ԱՄՆ դոլարով կամ 48.7 անգամ.
- **Երկաթի համաձուլվածք՝** 252.0 մլն ԱՄՆ դոլար, ավելանալով 63.3 մլն ԱՄՆ դոլարով կամ 33.5%.–ով:
- **Հեռախոսների և հեռահաղ. ապարատներ և մասեր՝** 271.1 մլն ԱՄՆ դոլար՝ ավելանալով 268.8 մլն ԱՄՆ դոլարով կամ 117.5 անգամ:
- **Կոնյակ, ռոմ, ջին, օղի, լիկյոր՝** 284.8 մլն ԱՄՆ դոլար ավելանալով 42.3 մլն ԱՄՆ դոլարով կամ 17.5%–ով
- **Ծխախոտ և սիգար՝** 317.8 մլն ԱՄՆ դոլար, iավելանալով 80.0 մլն ԱՄՆ դոլար կամ 33.6%–ով:

Միջազգային առևտուր. արտահանում

Գծապատկեր 8. արտահանման ծավալներն ըստ երկրների
2022, մլն ԱՄՆ դոլար



Գծապատկեր 9: Ապրանքների արտահանումն ըստ տեխնոլոգիականության մակարդակի
2022թ. հունվար-դեկտեմբեր



- **Կիսմշակ ոսկի, ոսկու փոշի:** 2022թ. արտահանումը կազմել է 414.2 մլն ԱՄՆ դոլար, աճը նախորդ տարվա համեմատ՝ 280.4 ԱՄՆ դոլար կամ 3.1 անգամ.
- **Ադամանդե քար:** 2022թ. արտահանումը կազմել է 417.7 մլն ԱՄՆ դոլար, աճը աճը նախորդ տարվա համեմատ՝ 312.1 մլն ԱՄՆ դոլար կամ 4.0 անգամ.
- **Պղնձի հանքաքար:** 2022թ. արտահանումը կազմել է 662.9 մլն ԱՄՆ դոլար, նվազելով նախորդ տարվա համեմատ 106.3 ԱՄՆ դոլարով կամ - 13.8%–ով.

- **Արտահանման հիմնական գործընկեր երկրներ:**
- 2022թ. ընդհանուր արտահանման 45%–ը բաժին է ընկել Ռուաստանին, ինչը կազմել է 2,411 մլն ԱՄՆ դոլար, իսկ աճը նախորդ տարվա համեմատ 1,570 ԱՄՆ դոլարով կամ 2.9 անգամ:
- **Այլ խոշոր գործընկեր երկրներն են.**
  - **ԱՄԷ:** 2022թ. արտահանումը կազմել է 534.1 մլն ԱՄՆ դոլար, աճը նախորդ տարվա համեմատ՝ 459.7 մլն ԱՄՆ դոլար կամ 7.2 անգամ: Դեպի ԱՄԷ արտահանումն ամենաշատն է աճել 10 առաջին արտահանման բարձր ծավալ ունեցող երկրների շարքում:
  - **Չինաստան:** 2022թ. արտահանումը կազմել է 369.5 մլն ԱՄՆ դոլար, նախորդ տարվա համեմատ նվազելով 23.7 մլն ԱՄՆ դոլարով կամ - 6.0%–ով.
  - **Շվեյցարիա:** 2022թ. արտահանումը կազմել է 254.6 մլն ԱՄՆ դոլար, նվազելով նախորդ տարվա համեմատ 104.9 մլն ԱՄՆ դոլարով կամ -29.2%–ով:

Միջազգային առևտուր. ներմուծում

Գծապատկեր 10: Ապրանքների ներմուծում
2022թ. հունվար-դեկտեմբեր, մլն ԱՄՆ դոլար



Գծապատկեր 11: Ներմուծումն ըստ ապրանքների
2022թ. հունվար-դեկտեմբեր, մլն ԱՄՆ դոլար



- 2022թ. ներմուծումը կազմել է 8,768.7 մլն ԱՄՆ դոլար, նախորդ տարվա համեմատ աճը 3,405.6 մլն ԱՄՆ դոլար կամ 63.5%:. 2022թ. աճին նպաստող հիմնական ապրանքներն են (տոկոսով 2021թ. համեմատ):
- **Ալյումինի հումք:** 99.2 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 26.1 մլն ԱՄՆ դոլար կամ 35.8%:
- **Ցորեն:** 102.2 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 39.9 մլն ԱՄՆ դոլար կամ 63.9%:
- **հեռուստացույց:** 126.3 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 97.3 մլն ԱՄՆ դոլար կամ 4.3 անգամ:
- **Դեղորայք:** 150.8 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 14.1 մլն ԱՄՆ դոլար կամ 10.3%:
- **Ավտոմատ հաշվի մեքենաներ:** 171.9 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 114.2 մլն ԱՄՆ դոլար կամ 3.0 անգամ;
- **Կիսամշակ ոսկի, փոշի:** 234.0 մլն ԱՄՆ դոլար , աճը՝ 143.9 մլն ԱՄՆ դոլար կամ 2.6 անգամ:
- **Հեռախոսներ և հեռախոսային սարքեր:** 381.2 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 298.2 մլն ԱՄՆ դոլար կամ 4.6 անգամ:
- **Ադամանդե քարեր:** 390 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 266.6 մլն ԱՄՆ դոլար կամ 3.2 անգամ:
- **Բնական և հեղույկ գազ:** 561.3 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 72.0 մլն ԱՄՆ դոլար կամ 14.7%:
- **Պատրաստի սննդամթերք:** 565.4 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 132.2 մլն ԱՄՆ դոլար կամ 30.5%:
- **Նավթ և նավթամթերք:** 574.3 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 201.8 մլն ԱՄՆ դոլար կամ 54.2%»
- **Քիմիական և հարակից արտադրանք:** 583.7 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 129.3 մլն ԱՄՆ դոլար կամ 28.4%.
- **Մարդատար ավտոմեքենա:** 705.4, աճը՝ 579 մլն ԱՄՆ դոլար կամ 5.6 անգամ.

Միջազգային առևտուր. ներմուծում

Գծապատկեր 12. Ներմուծման ծավալներն ըստ երկրների
2022 թվականի հունվար-դեկտեմբեր, մլն ԱՄՆ դոլար



Աղյուսակ 1: Ներմուծումն ըստ BEC
2022թ. հունվար-դեկտեմբեր

	ՆԵՐՄՈՒԾՈՒՄ	Տարեկան աճ	
	մլն ԱՄՆ դոլար	մլն ԱՄՆ դոլար	%
ԸՆԴԱՄԵՆԸ	**8768.7**	**3405.6**	**63.5**
Կապիտալ ապրանքներ	1379.3	547.3	65.8
Միջանկյալ ապրանքներ	4347.9	1716	65.2
Վերջնական սպառման ապրանքներ	3041.5	1142.3	60.1
	Ներմուծման կառուցվածք	Աճի կառուցվածք	
	%		
ԸՆԴԱՄԵՆԸ	**100.0**	**100.0**	
Կապիտալ ապրանքներ	**15.7**	**16.1**	
Միջանկյալ ապրանքներ	**49.6**	**50.4**	
Վերջնական սպառման ապրանքներ	**34.7**	**33.5**	

- 2022թ. որպես հիմնական գործընկեր Ռուսաստանին բաժին է ընկել ընդհանուր ներմուծման 32.8%-ը՝ կազմելով 2875.2 մլն ԱՄՆ դոլար: Վերջինս նախորդ տարվա համեմատ աճել է 877.3 մլն ԱՄՆ դոլարով կամ 43.9%-ով :
- Այլ խոշոր գործընկեր երկրներն են:
  - **Վրաստան**: 2022թ. ներմուծումը կազմել է 723.2 մլն ԱՄՆ դոլար, աճը նախորդ տարվա համեմատ՝ 368.9 մլն ԱՄՆ դոլար կամ 104.1%:
  - **Չինաստան:** 2022թ. ներմուծումը կազմել է 698.1 ԱՄՆ դոլար, աճը նախորդ տարվա համեմատ 146.2 մլն ԱՄՆ դոլար կամ 26.5:
  - **Իրան**: 2022թ. ներմուծումը կազմել է 601.4 մլն ԱՄՆ դոլար, աճը նախորդ տարվա համեմատ 161.8 մլն ԱՄՆ դոլար կամ 36.8%:
- Ըստ «Ապրանքների լայն դասակարգման (BEC)» ներմուծման աճը մեծապես պայմանավորված է միջանկյալ ապրանքների ներմուծման աճով, որի ծավալը կազմում է ընդհանուր ներմուծման 49.6%-ը.:
- 2022թ. սպառողական ապրանքների ներմուծումը կազմել է 3,041.5 մլն ԱՄՆ դոլար, աճը նախորդ տարվա համեմատ՝ 1,142.3 մլն ԱՄՆ դոլար կամ 60.1% Աճը հիմնականում պայմանավորված է ներքին պահանջարկի ակտիվացմամբ:
- 2022թ. միջանկյալ ապրանքների ներմուծումը կազմել է 4,347.9 մլն ԱՄՆ դոլար, աճը նախորդ տարվա համեմատ՝ 1,716 մլն ԱՄՆ դոլար կամ 65.2%:
- Կապիտալ ապրանքների ներմուծման աճը գերազանցում է միջանկյալ և սպառողական ապրանքների ներմուծման աճին:
- 2022թ. կապիտալ ապրանքների ներմուծումը կազմել է 1,379.3 մլն ԱՄՆ դոլար, աճը նախորդ տարվա համեմատ՝ 547.3 մլն ԱՄՆ դոլար կամ 65.8%:

Աշխատանքի շուկա. զբաղվածություն



- Աշխատողների միջին թվաքանակը (ֆորմալ զբաղվածություն) 2022թ. դեկտեմբերին կազմել է 708.9 հազար մարդ՝ աճելով 2021թ. դեկտեմբեր ամսվա համեմատ 5.5%–ով կամ 37.0 հազարով:
- 2022թ. դեկտեմբերի դրությամբ ամենաշատ ֆորմալ զբաղվածներ գտնվում են առևտրի, կրթության և արտադրության ոլորտներում.
- SS ոլորտում 2022թ. դեկտեմբերին աշխատողների թվաքանակը կազմել է 32.7 հազար մարդ, նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով 43.2%–ով:
- Առողջապահության ոլորտում թվաքանակը նվազել է 2.9%–ով:
- Ամենաբարձր աճ գրանցվել է «Շինարարություն» և «Տեղեկատվություն և կապ» ոլորտներում:
- Ռուս-ուկրաինական հակամարտությունը հանգեցրել է դեպի Հայաստան զբոսաշրջիկների/ներգաղթյալների հոսքի ավելացմանը, ինչը մեծացրել է «Կացության և հանրային սննդի կազմակերպում» ծառայությունների պահանջարկը:
- Պատերազմի պատճառով Հայաստան է ժամանել նաև աշխատուժի նոր խմբաքանակ: Սկսելով բիզնես կամ աշխատանք գտնելով Հայաստանում՝ նրանք նպաստել են բազմաթիվ ոլորտների, հատկապես SS ոլորտի աճին:



Աշխատանքի շուկա. աշխատավարձ



- Աշխատողների միջին թվաքանակը 2022թ. դեկտեմբերին կազմել է 708.9 հազար մարդ՝ աճելով նախորդ տարվա նույն ամսվա համեմատ 5.5%–ով կամ 37.0 հազարով:

Որից՝

- **Գյուղատնտեսություն՝** աշխատողների միջին թվաքանակը կազմել է 8,371, նվազելով 1.2%-ով:
- **Արդյունաբերություն՝** աշխատողների միջին թվաքանակը կազմել է 118,106, աճը՝ 3.6%:
- **Շինարարություն՝** աշխատողների միջին թվաքանակը կազմել է 28,570, աճը՝ 11.5%:
- **Մեծածախ և մանրածախ առևտուր՝** աշխատողների միջին թվաքանակը կազմել է 128,049, աճը՝ 9.0%:
- **Ծառայություններ՝** աշխատողների միջին թվաքանակը կազմել է 425,810, աճը՝ 4.8%:
- Միջին ամսական անվանական աշխատավարձը 2022թ. դեկտեմբերին կազմել է 309,080 դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 20.9%–ով:

Որից՝

- **Գյուղատնտեսություն՝** միջին ամսական աշխատավարձը կազմել է 168,227 դրամ, աճը՝ 9.9%:
- **Արդյունաբերություն՝** միջին ամսական աշխատավարձը Հանքագործական արդյուն. ոլորտում կազմել է 706,910 դրամ, նվազելով 3.3%–ով և միջին ամսական աշխատավարձը Մշակող արդյուն. ոլորտում կազմել է 221,531 դրամ, աճը՝ 7.9%:
- **Շինարարություն՝** միջին ամսական աշխատավարձը կազմել է 274,601 դրամ, աճը՝ 23.8%.
- **Մեծածախ և մանրածախ առևտուր՝** միջին ամսական աշխատավարձը կազմել է 188,505 դրամ, աճը՝ 16.7%.
- **Ծառայություններ՝** միջին ամսական աշխատավարձը «Տեղեկատվություն և կապ» և «Կրթություն» ոլորտներում կազմել է համապատասխանաբար 917,027 և 171,900 դրամ, աճը՝ 36.8% և 4.6%:

Դրամական փոխանցումներ և փոխարժեք

Գծապատկեր 17. Դրամական փոխանցումների ներհոսք,
մլն ԱՄՆ դոլար



Գծապատկեր 18: Տրանսֆերտները և ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք



Գծապատկեր 19: ՀՆԱ-ի աճի կանխատեսումներ ԱՄՆ-ի և Ռուսաստանի համար, %



- 2022թ. փոխանցումների ընդհանուր ներհոսքի ծավալը կազմել է 5,190.4 մլն ԱՄՆ դոլար, նախորդ տարվա համեմատ աճելով 2.5 անգամ:
- Դրամական փոխանցումների մեծ մասը ստացվել է Ռուսաստանից, որին բաժին է ընկնում փոխանցումների մոտավորապես 69.3%. 2022թ. Ռուսաստանից փոխանցումների ծավալը կազմել է 3,598.2 մլն ԱՄՆ դոլարնախորդ տարվա համեմատ աճելով 4.2 անգամ.
- 2022թ. ընդհանուր տրանսֆերտների 12.9% կազմել են ԱՄՆ–ից ստացվող տրանսֆերտները: Այն կազմել է կազմել է 671 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 15.6%–ով.
- 2022թ. ֆիզիկական անձանց կողմից իրականացված փոխանցումների զուտ ներհոսքը կազմել է 2,583.6 մլն ԱՄՆ դոլար, նախորդ տարվա համեմատ աճելով 2.9 անգամ:
- Ռուս–ուկրաինական հակամարտությունից հետո տրանսֆերտների հոսքը և զուտ ներհոսքը զգալիորեն ավելացել է, ինչը նշանակում է, որ թեև կա շոկային գործոն, այուամենայնիվ տրանսֆերտները չեն նվազում անգամ այն դեպքում, եթե բացառենք պատերազմի հետևանքները:
- Գծապատկեր 14-ից երևում է, որ տրանսֆերտներն ու փոխարժեքը բացասաբար են փոխկապակցված, սակայն ռուս–ուկրաինական պատերազմը պատճառ է դարձել, որ 2022թ. 1-ին եռամսյակում ուղղակի փոխկապակցվեն, իսկ 2022թ. մայիսից օրինաչափությունը վերականգնվեց:
- Ըստ ԱՄՀ կանխատեսումների 2022թ. Ռուսաստանը և ԱՄՆ կունենան համապատասխանաբար -2.2% և 2.0%, իսկ 2023թ.՝ 1.4% և 0.3% տնտեսական աճ:
- ԱՄՆ-ի և Ռուսաստանի ՀՆԱ-ի դանդաղ և կամ բացասական աճը կարող է չազդել դեպի Հայաստան տրանսֆերտների ներհոսքի վրա, քանի որ, չնայած տնտեսական իրավիճակին, թե՛ Ռուսաստանից, թե՛ ԱՄՆ-ից ներհոսքի աճը չի դանդաղել՝:

ՍԳԻ - Հայաստան և մնացած աշխարհը

Գծապատկեր 19. 2022 թվականի դեկտեմբերի գնաճ, %
Աշխարհ, Հայաստան



Գծապատկեր 20. Գնաճի մակարդակ, միջին սպառողական գներ
տարեկան տոկոսային փոփոխություն



- Ռուս-ուկրաինական պատերազմից հետո Ռուսաստանի դեմ բազմաթիվ պատժամիջոցներ են մտցվել: Ի պատասխան՝ Ռուսաստանը նույնպես պատժամիջոցներ սահմանեց: Այս պատժամիջոցների և պատերազմի արդյունքում COVID-19-ի վերականգնումը դանդաղեց, իսկ Հայաստանում և աշխարհում գնաճի տեմպերը շարունակեցին արագանալ:
- 2022 թվականի վերջի դրությամբ համաշխարհային գնաճը մնում է մտահոգիչ և աճող գործոն: Ընթացիկ տվյալների համաձայն՝ 148 երկրների միջին համաշխարհային գնաճը 2022 թվականի դեկտեմբերին կազմում է մոտավորապես 15.3%: Սա նշանակում է, որ գրեթե բոլոր երկրները տուժել են գնաճի աճից:
- Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2022 թվականի դեկտեմբերին Հայաստանում գնաճը կազմել է 8,3 տոկոս:
- Հայաստանն իր աշխարհագրական դիրքով, չունի գնաճի այնքան բարձր ցուցանիշ, որքան հարևան երկրները: Գծապատկեր 20-ից կարելի է նկատել, որ դեկտեմբերին Տաջիկստանը միակ երկիրն է, որը տարածաշրջանում ունեցել է Հայաստանից ավելի բարձր գնաճ՝ 4,2%:
- Հայաստանի Կենտրոնական բանկը 2022 թվականի ընթացքում վեց անգամ բարձրացրել է իր տոկոսադրույքը, ինչը գնաճը կայուն պահող գործոններից մեկն է: Տարեսկզբից տոկոսադրույքը բարձրացել է 2.75 տոկոսային կետով:
- 2022 թվականի դեկտեմբերի Հայաստանի գնաճը ցածր է համաշխարհային միջին գնաճի ցուցանիշից:

Հայաստանում գների ինդեքսները

Գծապատկեր 22: Հայաստանի ՍԳԻ-ի դինամիկան



Գծապատկեր 22. Հայաստանի գների ինդեքսների դինամիկան



- Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների Հայաստանի սպառողական գների ինդեքսը 2022 թվականի դեկտեմբերին կազմել է 8,3%, իսկ 2022 թվականի հունվար-դեկտեմբերին՝ 8,6%:
- 2022թ. ՀՀ ԿԲ ավանդների, ռեպո և վերաֆինանսավորման տոկոսադրույքներն աճել են Դրանք ներկայումս կազմում են համապատասխանաբար 9.25%, 12.25% և 10.75%:
- Սպառողական գների ինդեքսը և արտահանման գների ինդեքսը 2022 թվականի ընթացքում Հայաստանում գների այլ ինդեքսների համեմատ եղել են համեմատաբար կայուն:
- Թեև 2022 թվականին ներմուծման գների ինդեքսը ժամանակի ընթացքում նվազում է, այնամենայնիվ Հայաստանը դեռևս մեծապես կախված է վերջնական, կապիտալ և միջանկյալ ապրանքների ներմուծումից: Այսպիսով, կողմնակի ազդեցությունը որոշ չափով անխուսափելի էր:
- 2022 թվականի հունվար-օգոստոս ժամանակահատվածից հետո նկատվում է շինարարության, ներմուծման և արտադրողի գների ինդեքսների նվազման միտում: 2022 թվականին արդյունաբերողների գների ինդեքսը, ներմուծման գների ինդեքսը և շինարարության գների ինդեքսը կազմել են համապատասխանաբար 2,6%, 4,8% և 6%:
- Հայաստանի արտահանման ինդեքսը 2022 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին բացասական է արձանագրվել: Դրա պատճառը կարող է լինել այն, որ տարեսկզբից Հայաստանի փոխարժեքն արժորվել է ավելի քան 20%-ով

Հայաստանում գների ինդեքսները

Գծապատկեր 23. 5 Հիմնական կշիռները ՍԳԻ զամբյուղում, 2022



Գծապատկեր 25: Սպառողական գների ինդեքսում 4 առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքախմբեր



- Հայաստանի ՍԳԻ զամբյուղը կազմված է տասներկու հիմնական կատեգորիաներից, որոնցից յուրաքանչյուրը կշռված է ըստ սպառողների կարիքների և առաջնահերթությունների:
- Տասներկու կատեգորիաներն են՝ 1) սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ, 2) անշարժ գույք, ջուր, էլեկտրականություն, գազ և այլ վառելիքներ, 3) առողջապահություն, 4) տրանսպորտ, 5) ալկոհոլային խմիչքներ, 6) հագուստ և կոշիկ, 7) կապ, 8) կահավորանք, կենցաղային տեխնիկա, 9) հանգիստ և մշակույթ, 10) կրթություն, 11) ռեստորաններ և հյուրանոցներ և 12) տարբեր ապրանքներ և ծառայություններ:
- Տեսակարար կշռով ամենաբարձր կշիռ ունեն անշարժ գույքը և սննդամթերքը:
- 2022 թվականի հունվար–դեկտեմբերին ՍԳԻ-ի վրա ամենաբարձր կշռված գնաճային ազդեցությունն է ունեցել «Սնունդը»-ը: Կուտակային 8,6% գնաճի մեջ այն կազմել է մոտավորապես 4.9 տոկոսային կետ:

Հայաստանի պարտքն ու բյուջեն

Գծապատկեր 26: ՀՀ պետական պարտք
մլն ԱՄՆ դոլար



Գծապատկեր 27: Հայաստանի բյուջեի եկամուտները և ծախսերը
մլն. դրամ



- Հայաստանի ընդհանուր պարտքը 2022 թվականի դեկտեմբերին կազմել է 10,637.7 մլն ԱՄՆ դոլար:
- Դրանից 6450.8 մլն դոլարը արտաքին պարտքն է, որը 2021 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել է մոտ 3.0%-ով, մնացածը ներքին պարտքերն են, որոնք աճել են մոտ 62.5%-ով:
- Արտաքին պարտքը բաժանվում է երկու մասի՝ Հայաստանի պետական պարտք, որը կազմում է մոտ 91.5%՝ 2021թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 4.7%-ով, և ՀՀ կենտրոնական բանկի պարտք, որը կազմում է մոտ 8.5%՝ 2021թ. դեկտեմբերի համեմատ աճել է 20.5%-ով:
- 2022 թվականին Հայաստանի բյուջեի եկամուտը կազմել է 2,063,127.2 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 22.5%-ով:
- Սա պայմանավորված է հարկային և տուրքերի եկամուտներով, որոնք աճել են մոտ 21.4%-ով և կազմել 1,925,968.7 մլն դրամ: 2022 թվականին բյուջեի ծախսերն աճել են մոտ 12.8%-ով: Պետական ծախսերը բաժանվում են ընթացիկ ծախսերի և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառույթների:
- Ընթացիկ ծախսերն աճել են 4.2%-ով, որը ներառում է պետական հատվածի աշխատողների աշխատավարձերը, ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը, տոկոսավճարները, դրամաշնորհները և այլն:
- 2021 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործանությունների ծավալն աճել է 90.1%-ով: